«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ:

ԱՌԱՐԿԱ **ՆԶՊ**

ՀԵՂԻՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ ԴԵՐԵՆԻԿԻ

ՄԱՐԶ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՄԵՂՐԱՁՈՐԻ Հ. ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ---------- 3

Մարդասիրական մտքի զարգացումը եվ պետությունների գործունեությունը դարերի ընթացքում ---------- 5

Հին աշխարհ ---------- 6

Միջին դարեր ---------- 7

Նոր ժամանակներ ---------- 9

Իրավունքը եվ պատերազմը ---------- 14

Ամփոփում ---------- 15

Կիրառվող մեթոդները ---------- 17

Օգտագործված գրականության ցանկ ---------- 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս ուսումնասիրության սկզբում հարկ եմ համարում հիշեցնել մի քանի հիմնական հասկացություններ.

1. Միջազգային մարդասիրական իրավունքի խնդիրն է կանոնակարգել ռազմական գործողությունները՝ դրանց առաջ բերած տառապանքներն ու զրկանքները մեղմելու նպատակով: Մարդասիրական իրավունքը միջուզգային իրավունքի խոշոր բաժիններից մեկն է և իր մարդասիրական հենքով կոչված է պաշտպանելու մարդուն պատերազմի ժամանակ: «Մարդասիրական իրավունք» արտուսհայտությունը իր մեջ ներառում է երկու տարբեր հասկացություններ. մեկն՝ իրավական բնույթի, մյուսը բարոյական: Եվ այդպես էլ պետք է լիներ, քանի որ այս բաժինը կազմող դրույթները միջազգային իրավունքի ոլորտ են բերում բարոյական կամ, ավելի ճիշտ, մարդասիրական բնույթի մտահոգություններ: Իրավունքի այս բաժինն իր ողջ նշանակությունը ստանում է հենց այն բանի շնորհիվ, որ սերտորեն առնչվում է մարդուն, քանի որ հենց այս, եւ ոչ թե մեկ այլ բաժնից է կախված բազում մարդկանց կյանքն ու ազատությունն այն ժամանակ, երբ պատերազմն իր չարագույժ ստվերն է սփռում աշխարհի վրա: «Միջազգային մարդասիրական իրավունք» տերմինը, որ շուտով ընդունվեց շատերի կողմից, այսօր կիսապաշտոնական է դարձել: Մարդասիրական իրավունքը երկու մասից է բաղկացած՝ ժնևյան իրավունք և Հաագայի իրավունք.

2/ Ժնևյան կամ բուն մարդասիրական իրավունքը կոչված է պաշտպանելու մարտական գործողությունների ընթացքում շարքից դուրս եկած զինվորականներին, ինչպես նաեւ այդ գործողություններին չմասնակցող անձանց: Այն բաղկացած է 1949 թ. Ժնևյան չորս կոնվենցիաներից և 1977 թ. երկու լրացուցիչ արձանագրություններից՝ մոտավորապես 600 հոդվածից կազմված տպավորիչ իրավական մի կոթող, որ սահմանում է զինված ընդհարումների ժամանակ մարդուն պաշտպանող նորմերը: Զարմանալի չէ. որ հենց Կարմիր խաչի միջազգային կոմիտեն /ԿԽՄԿ/ է եղել դրա ստեղծման և զարգացման նախաձեռնողը: Այսօր այդ իրավունքը զինված ընդհարումների ժամանակ պաշտպանություն և օգնություն իրականացնելուդ ԿԽՄԿ՝ Կարմիր խաշի այդ չեզոք կառույցի գործունեության իրավական հիմքն է ժնևյան իրավունքը մշակվել է բացառապես պատերազմի զոհերի շուսհերից ելնելով, ի տարբերություն Հաագայի իրավունքի, պետություններին ոչ մի իրավունք չի ընձեռում ի վնաս անհատների: Ժնևյան իրավունքով սկսվեց մի դարաշրջան, որտեղ առաջնայ-նությունը տրվում է անհատին և մարդասիրական սկզբունքներին:

3/ Հաագայիի կամ բուն պատերազմի իրավունքը՝ սահմանում է պատերազմող կողմերի իրավունքներն ու պարտականությունները ռազմական գործողությունների

ընթացքում և սահմանափակում ավերիչ միջոցների ընտրությունը: Տարակույս չկա, որ Հաագայի իրավունքը ևս ներթափանցված է մարդասիրական գաղափարներով: Սակայն դրա նպատակն է կանոնակարգել ռազմական գործառությունները, ուստի այն որոշ չափով ելնում է ռազմական անհրաժեշտության եւ պետության պահպանման գաղափարներից: Հաագայի իրավունքը, հիմնականում, ծագել է 1899 թ. Հաագայի կոնվենցիաներից. որոնք վերանայվել են 1907 թվականին: Սակայն այդ իրավունքից անհրաժեշտ է դուրս բերել ռազմագերիներին, ծովում ռազմական գործողությունների ընթացքում վիրավորներին և նավաբեկյալներին. ինչպես նաև գրավյալ տարածքների քաղաքացիական բնակչությանը վերաբերող շատ կարևոր հատվածները, որոնք 1929 և 1949 թվականներին ներառվեցին ժնևյան իրավունքի մեջ. քանի որ տրամաբանորեն հենց դրան են առնչվում: Վերջերս ընդունված ժնեւյան կոնվենցիաների լրացուցիչ արձանագրություններն այնպիսի դրույթներ են պարունակում, որոնք ավանդաբար մտնում էին Հաագայի իրավունքի մեջ. այն է մարտիկների պահվածքը, եւ առանձնակի կարևորության մի զլուխ, որ վերաբերում է ռազմական գործողությունների ընթացքում խաղաղ բնակչության պաշտպանությանը: Այս կերպ կարծես ջնջվում է ժնևյան և Հաագայի իրավունքների տարբերությունը:

Սակայն դեռևս երկու բնագավառ վերաբերում են Հաագայի իրավունքին. մշակութային արժեքների պաշտպանության մասին կոնվենցիան, որ ստորագրվել է 1954 թ. հենց Հաագայում. և 1980 թ. հոկտեմբերի 10-ի՝ սովորական զենքի որոշ տեսակների արգելման կամ սահմանափակման մասին կոնվենցիան ընդունված ԺՆԵՒՈՒՄ՝ ՄԱԿ-ի հովանու ներքո:

4/ Այժմ հարկ է հակիրճ պարզաբանել. թե ինչպիսի փոխադարձ կապ կա միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների օրենսդրության միջև, որի նպատակն է ցանկացած ժամանակ անձին հնարավորություն ընձեռել օգտվելու հիմնական իրավունքներից և ազատություններից. պաշտպանելով նրան սոցիալական աղետներից: Այստեղ գլխավոր դերը պատկանում է Ազգերի լիգային փոխարինած
ՄԱԿ-ին: Իրենց աշխարհագրական շրջանակներում ակտիվորեն գործում են նաև այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են Եվրոպայի խորհուրդը և Ամերիկյան պետությունների կազմակերպությունը:

Միջազգային մարդասիրական իրավունքը, որպես գրավոր իրավունք, սկիզբ է առնում 1864 թ. Ժնևի 1 պայմանագրից, իսկ մարդու իրավունքները՝ 1948թ. Համընդ-հանուր հռչակագրից: Սակայն որպես գաղափար՝ երկու շարժումներն էլ նույն պատմական և փիլիսոփայական ակունքներն ունեն, երկուսն էլ ծնունդ են առել

դեռ վաղնջական ժամանակներում՝ մարդուն չար ուժերի սպառնալիքից պաշտպանելու անհրաժեշտությունից: Հետագայում այդ ընդհանուր գաղափարը սկիզբ դրեց երկու տարբեր ուղղությունների՝ սահմանափակել պատերազմի պատճառած չարիքները և պաշտպանել մարդուն կամայականություններից: Դարերի ընթացքում դրանք զուգահեռաբար զարգացան:
Անշուշտ, մարդու իրավունքներն ավելի ընդհանրական սկզբունքներ են, մինչդեռ մարդասիրական իրավունքը առանձնահատուկ և բացառիկ բնույթ ունի, քանի որ այն սկսում են կիրառել հենց այն պահից, երբ պատերազմը խոչընդոտում կամ սահմանա-փակում է մարդու իրավունքների իրականացումը:

Իրավական այս երկու համակարգերը տարբեր են. քանի որ եթե մարդա-սիրական իրավունքը գործում է միայն զինված ընդհարման ժամանակ, ապա մարդու իրավունք-ների օրենսդրությունը գործնականում կիրառվում է հատկապես խաղաղ պայման-ներում՝ պատերազմի ժամանակ դրա կիրառումը սահմանափակող հոդվածներով: Բացի այդ, մարդու իրավունքները հիմնականում վերաբերում են պետության և նրա քաղաքացիների միջև հարաբերությունների ոլորտին, մինչդեռ մարդասիրական իրավունքը կարգավորում է պետության եւ թշնամի տերության քաղաքացիների միջև հարաբերությունները:

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՐԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Մենք գիտենք, որ իրավունքն ավելի շուտ հաջորդում է փաստերին, քան նախորդում դրանց: Կարող ենք ասել նաև, որ իրավունքի հիմնական տարրերից մեկն էլ նրա շարունակականությունը. մշտնջենականությունն է. քանի որ այն ձևավորվում է սովորույթի հիման վրա: Այդ է պատճառը. որ պատմությունն այդքան մեծ տեղ է գրավում իրավաբանական առարկաների ուսումնասիրման մեջ. Թեև միշտ չէ. որ դա գիտակցում ենք:

Փորձենք հակիրճ ներկայացնել մարդասիրական մտքի զարգացումը դարե րի ընթացքում և տեսնենք, թե ինչպիսի դեպքեր են ազդել այն իրավունքի ձևա-վորմանն վրա, որը պատրաստվում ենք ուսումնասիրել: Պատերազմի չարիքներից և կամայականությունից մարդուն պաշտպանելն ամենևին էլ նոր գաղափար չէ: Որպես դարերի խորքից բխած կենարար աղբյուր՝ այն ուժ է ստացել ու հզորացել և այսօր մեզ է հասել որպես հուժկու ալիք:
Այս ուղղությամբ մարդկության գործադրած ջանքերը ներդաշնակ են քաղաքակրթության վերընթաց շարժմանը, որի հետ մարդասիրական իրավունքը

շաղկապված է անքակտելիորեն: Քաղաքակրթությունն նման այս իրավունքն էլ ապրել է մերթ բուռն զարգացման, մերթ լճացման, նույնիսկ ետընթացի պահեր, որոնք սև ու սպիտակ նշաձողերի պես ձգվում են պատմության ողջ ընթացքով:

1. ՀԻՆ ԱՇԽԱՐՀ

Մարդասիրական իրավունքը շատ ավելի խոր արմատներ ունի, քան կարծում էին որոշ սահմանափակ եվրոպացի հեղինակներ, որոնց կարծիքով այն ուկիզբ էր առել ուշ միջնադարում: Իրականում պատերազմի օրենքները նույնքան հին են. որքան ինքը պատերազմը. իսկ պատերազմն էլ այնքան հին է, որքան կյանքը երկրի վրա: Ժամանակակից բնագետները. ուսումնասիրելով կենդանական աշխարհի ցածրակարգ ներկայացուցիչների վարքագիծը, նույնիսկ նրանց մոտ հայտնաբերել են պատերազմի կանոնների պարզունակ դրսեւորումներ: Օրինակ, նույն տեսակի ներկայացուցիչների շրջանում հարձակողական բնազդը, սովորաբար չի հանգեցնում հակառակորդի մահվան. Կռիվը կարգավորվում է որոշակի կանոններով, օրինակ, եղջերուները միմյանց դեմ կռվում են միայն եղջյուրներով. իսկ շների կամ գայլերի մարտի ժամանակ վերահաս պարտությանը զգացող կենդանին հանձնվում է կոկորդը հաղթողին մեկնելով, իսկ վերջինս հրաժարվում է մահացու գրոհից:

Մերօրյա վայրի ցեղերի ուսումնասիրությունը թույլ է տալիս պատկերացնել թե ինչպիսին է եղել նախամարդը քաղաքակրթության արշալույսին: Օրինակ. Նոր Գվինեայում. որտեղ պապուաս ցեղերը մշտապես պատերազմում են միմյանց դեմ. հակառակորդը վաղօրոք զգուշացվում է նախապատրաստվող հարձակման մասին, և պատերազմը չի սկսվում, քանի դեռ երկու կողմերն էլ պատրաստ չեն: Նետերը չեն փետրավորվում ավելորդ վնաս չպատճառելու համար: Վերջապես, եթե որևէ կողմից մեկը վիրավորվում կամ զոհվում է. ապա կռիվը տասնհինգ օրով դադարեցվում է: Ձինադադարն այնքան անշեղորեն է կատարվում. որ հակամարտող կողմերը նույնիսկ ժամապահներ կարգելու կարիք չունեն:

Ինչպես գրում է Քուինսի Ռայթը', «նախնադարյան մարդկանց պատերազմներում կարելի է գտնել պատերազմելու՝ ներկայումս գործող միջազգային կանոններից շատերը ինչպես, օրինակ կանոններ, որոնք սահմանում են հակառակորդների տեսակները կամ վերաբերում են պատերազմի հանգամանքներին, սկսելու և ավարտելու կարգին ու հիմքերին, մասնակիցների թվին, տարվա եղանակին, վայրին, ինչպես նաև պատերազմեր ձևերին, նաև կանոններ, որոնք պատերազմն օրենքից դուրս են հայտարարում»: Քաղաքների զարգացմանը և ազգերի

կազմավորմանը զուգընթաց, մոտավորապես մ.թ.ա. 2000 թվականին, ծնունդ առան իրավունքի այն առաջին կանոնները, որոնք հետագայում միջազգային իրավունք անունը պիտի ստանային: Շումերների մոտ արդեն պատերազմը լիովին ձևավորված գործընթաց էր. որ ներառում էր պատերազմի հայտարարությունը, հրադադարի հնարավորությունները. բանագնացների անձեռնմխելիությունը և խաղաղության պայմանագիրը: Բաբելոնի արքա Համմուրաբին հրապարակեց իր անունը կրող հայտնի օրենսգիրքը, որն սկսվում է այս խոսքերով. «Ես հռչակում եմ այս օրենքները, որպեսզի ուժեղը չճնշի տկարին»: Այս շրջանում պատանդներին ազատ էին արձակում փրկագնի դիմաց: Հին Եգիպտոսի մշակույթը ներթափանցված էր մերձավորի նկատմամբ հարգանքով: «Ճշմարիտ գթասրտության յոթ գործերը» գրքում կոչ է արվում «կերակրել քաղցածներին. ջուր տալ ծարավներին, հագուստ՝ մերկերին, օթևան օտարներին, ազատ արձակել գերիներին, խնամել հիվանդներին և թաղել մեռելներին»:
Երկրորդ հազարամյակի պատվիրաններից մեկն ասում է.. «Ուտելիքդ կիսիր թշնամուդ հետ»: Հյուրն Աստծուն ն է.. թեկուզ թշնամի:
Չինաստանում Լաո Ցին հայտարարում էր. թե մարդն արժեք է ստանում մարդկանց ծառայելով, իսկ Կոնֆուցիոսը քարոզում էր գործնական այլասիրություն՝ հիմնված համերաշխության և իմացության վրա: Մեհտին առաջ քաշեց համընդհանուր սիրո՝ որպես փոխշահավետության աղբյուրի, գաղափարը: Մահաբհարատան եւ Մանուի օրենքը պատերազմողների համար այնպիսի կանոններ են սահմանում, որոնք մեծ առաջընթաց քայլեն ժամանակի համեմատ: Ըստ այդ կանոնների, արգելվում է սպանել զենքը վայր դրած կամ հակառակորդին հանձնված թշնամուն, վիրավորներին,
բուժելուց հետո, պետք է տուն վերադարձնել:

2. ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

Հետագայում մարդասիրական իրավունքի զարգացմանը նպաստեցին մի շարք այլ գործոններ, այդ թվում քրիստոնեությունը, իսլամը և ասպետությունը: Հուդայա-քրիստոնեական կրոնի համաձայն բոլոր մարդիկ ստեղծվել են Աստծո պատկերով, միևնույն Հոր զավակներն են և կոչված են հավերժական կյանքի: Այս նոր վարդապետության հետևանքները բազում էին ու անհաշիվ, քանի որ անհատն իր կարգավիճակով կապվում էր տիեզերքի կառույցին: Մարդ-անհատը ձեռք էր բերում այնպիսի արժանապատվություն, որ մինչ այդ չէր ունեցել: Եթե բոլոր մարդիկ եղբայրներ են, ապա նրանց սպանելը հանցագործություն է և ստրուկներ էլ չպիտի լինեն: Այս գաղափարներն այնքան հեղափոխական էին, որ սասանեցին հին

հասարակարգի հիմքերը և մեծ նվաճումներին հավասար՝ նպաստեցին հին աշխարհի վերջնական կործանմանը: Միջնադարում փորձում էին կյանքը ներկայացնել դեպի հավիտենական երանություն տանող ճանապարհի մի հանգրվան: Մարդիկ ավելի շատ մտահոգված էին ոչ թե իրենց մարմնի, այլ հոգու փրկությամբ, ընդ որում, հոգին ու մարմինը խստորեն հակադրվում էին միմյանց: Երկրային կյանքն այնպիսի արժեք չէր համարվում, որպեսզի այն պահպանելու կամ երկարացնելու համար մարդիկ մեծ զոհողությունների գնային: Ոմանք նույնիսկ տառապանքի մեջ որոշակի գերբնական արժեք, դաստիարակչական հատկություններ էին տեսնում:

Քրիստոնեական հավատի մի շարք երևելիների օրինակով, որոնց թվում սուրբ Ֆրանսուա Ասիզցին. սուրբ Շլսռլ Բորրոմին. ավելի ուշ սուրբ Վինսենտ դե Պոլը, վանականները և օտարընկալ միաբանությունները, այդ թվում Երուսաղեմի սուրբ Հովհաննեսի կամ Մալթայի ուխտը, անօրինակ անձնվիրությամբ փորձում էին մեղմել թշվառների տառապանքները, մանավանդ երբ «մահտարաժամը», ինչպես անվանում էին ժանտախտն այն ժամանակ, իր թևերն էր փռել Եվրոպայի վրա, իսկ հասարա-կության մի ստվար զանգվածը բացարձակ անտարբեր էր օտարի տառապանք-ներին: V դարի սկզբում մշակվեց մի տեսություն, որ փոխառված էր հռոմեացիներից: Խոսքը հայտնի չարաբաստիկ «արդարացի պատերազմի» տեսության մասին է. որ հետագայում զարգացրին Թովմա Աքվինացին եւ բազմաթիվ այլ աստվածաբաններ: Այդ տեսությունը բարոյական բարձր սկզբունքների և քաղաքական անհրաժեշտության յուրահատուկ փոխզիջում էր առաջարկում, որի նպատակն էր հավատացյալների աչքում արդարացնել պատերազմն ու նրա արհավիրքները: Քանի որ նպատակն արդարացնում է միջոցները, ուրեմն իշխանավորի սահմանած կարգի համար մղվող պատերազմն իր մեջ մեղք չի պարունակում, հետևաբար այն դարարացի, Աստծո կամքով մղվող պատերազմ է, և հակառակորդն էլ Աստծո թշնամին է, ուրեմն՝ անարդար պատերազմ է վարում: Ըստ այդմ պետք է բավարարվեն մի շարք պայմաններ, որպեսզի պատերազմն արդարացի համարվի, պետք է, որ այն հրահրող պատճառը՝ ինքնապաշտպանություն կամ արդարության վերականգնումը լինի: Սակայն պատմության ընթացքում չի եղել մի դեպք, երբ որևէ իշխանավոր կամ պետություն հայտարարի. թե ինքն անարդար պատերազմ է մղում կամ չհայտարարի. որ իր մղած պայքարը թշնամու կողմից ոտնահարված արդարության վերականգնումն է: Ով ծանոթ է մարդկային էությանը կասի, որ արդարացի պատերազմն այն պատե-ռազմն է. որն ինքդ ես մղում, իսկ անարդարը հակառակորդի վարած պատերազմն է: Այդպես է եղել և այդպես կլինի միշտ: Եվ այսպես, յուրաքանչյուր կողմը կամ չարամ-

տորեն, կամ, լավագույն դեպքում միամտաբար կպնդի, որ արդարացին միմիայն իր պատերազմն է:

3. ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

XVI դարում ժամանակակից պետությունների ձեւավորումը եւ Հռոմի պապի իշխանության անկումն առաջ բերեցին միջազգային իրավունքի նոր ըմբռնում: Դոմինիկյան ուխտի անդամ, իսպանացի Ֆրանսիսկո դե Վիտորիան զարգացրեց սուրբ Ավգուս-տիանոսի եւ սուրբ Թովմա Աքվինացու գաղափարները ստեղծելով մի ամբողջական վարդապետություն: Վիտորիայի մարդասիրական հայացքները մի քայլ առաջ էին իր ժամանակից: ճիշտ է, նա դեռ չի կարողանում ձերբազատվել արդարացի պատերազմի կապանքներից, սակայն ընդանում է, որ այն արդարացի կարող է համարվել երկու կողմից էլ, մի բան, որ նրա գործընկեր Ֆրանսիսկո Սուարեսն անհեթեթ էր անվանում: Գրոտիուսը նույնպես չէր հրաժարվել արդարացի պատերազմի գաղափարից, սակայն նա կարծում էր, որ պետության պատերազմելու անքակտելի իրավունքն ավելի կարևոր տարր է. քան պատերազմի պատճառի արդարացի լինելը: Պատերազմն, ըստ նրա, պետությունը պահպանելու քաղաքական միջոց է: «Պատերազմելիս,- ասում էր նա,- հարկավոր է մշտապես մտածել խաղաղության մասին»: Նա առաջինն էր, որ ասաց, թե «արդարացի պատճառը», որ պետությանը թույլ է տալիս պատերազմ սկսել, չի նշանակում, թե հակառակորդներն ազատվում են պատերազմելու կանոնները պահպանելու պարտականությունից: Սակայն, Վիտորիայի նման Գրոտիուսը ևս կարծում էր, որ հակառակորդ երկրի բնակչությունը թշնամի է. և նրա ճակատագիրը կախված է հաղթողի կամքից: Սակայն նա չէր արդարացնում ավելորդ դաժանությունը, որն անհրաժեշտ չէր հաղթանակի համար և կոչ էր անում խնայել ոչ միայն խաղաղ բնակչությանը, այլեւ զինվորներին՝ եթե դա թույլ է տալիս ռազմական անհրաժեշտութ-յունը: Եվրոպայում պատերազմն արագ տեմպերով մարդկայնացվում էր: Բանակների հրամանատարների միջեւ նախապես համաձայնագիր էին կնքվում տուժածների վերաբերյալ, որոնք հաճախ ողջախոհության եւ չափավորության նմուշներ էին: Այս համաձայնագիրներից ամենանշանակալին, անտարակույս, Ֆրիդրիխ Մեծի և Բենջամին Ֆրանկլինի միջեւ 1785 թ. կնքված « Բարեկամության եւ խաղաղության» պայմանագիրն է: Այստեղ շարադրված դրույթները սկզբունքների աստիճանի են բարձրացված: Դրանցում առաջին անգամ պայմանավորվող կողմերը «փոխադարձաբար պարտավորություն են ստանձնում աշխարհի առջև»՝ հավաստելով, թե պետությունների միջեւ կնքված պայմանագրի նպատակը անհատի պաշտպանությունն է: Պայմանագրում նշվում էր.

որ ընդհարման դեպքում կողմերը կհրաժարվեն
շրջափակումից, և թշնամի տերության քաղաքացիները հնարավորության կունենան, սահմանված ժամկետը լրանալուն պես, թողնել Երկիրը: Ռազմագերի-ները կապահովվեն սննդով եւ կացարանով, ինչպես գերևարող տերության զինվորները: Վստահված անձը կարող է նրանց այցելել և օգնություն ցույց տալ: Նման դրույթների կրկնությունից իսկական սովորութային իրավունք էր ձևավորվում, որն ամփոփ կարելի է ներկայացնել այսպես.

1/ Հիվանդանոցներն անձեռնմխելի են և պետք է նշվեն հատուկ դրոշով, որի գույնը յուրաքանչյուր բանակի համար տարբեր է:

2/ Վիրավորներն ու հիվանդները ռազմագերի չեն համարվում: Նրանց ցույց է տրվում նույնպիսի օգնություն, ինչ գերևարող բանակի վիրավորներին ու հիվանդներին, և ապաքինումից հետո նրանք հայրենադարձվում են:

3/ Չի կարելի գերի վերցնել բժիշկներին, նրանց օգնականներին և հոգևորականներին: Հարկավոր է նրանց վերադարձնել իրենց բանակները:

4/ Ռազմագերիների կյանքը պետք է պաշտպանվի, և նրանք պետք է փոխա՛նակվեն առանց փրկագնի:

5/ Քաղաքացիական խաղաղ բնակչությունը չպետք է տուժի ռազմական գործողութ-յուններից:

Այս դրույթները կատարելության այնպիսի աստիճանի էին հասցված, որ Լադերը 1876 թ. գրում էր. «Ժնևյան կոնվենցիայի համարյա բոլոր գործող դրույթները...կարելի է գտնել ավելի վաղ շրջանի պայմանագրերում, ի դեպ, շատ առումներով՝ ավելի լիարժեք, ավելի ծավալուն, ավելի արդարացի և գործնականում՝ ավելի օգտակար...»: Սակայն հարկ է նշել, որ այս պայմանագրերը հաճախ միանգամյա «օգտագործման» համար էին. եւ մշակվում էին որևէ կոնկրետ հակամարտության առիթով: Ժան-Ժակ Ռուսոն պատերազմների արհավիրքների մասին այսպես էր գրում 1762 թ, իր « Հասարակական դաշինքում». «Պատերազմը ոչ թե մարկանց, այլ պետությունների միջև հարաբերություն է, և մարդիկ թշնամի են դառնում պատահականորեն, ոչ որպես մարդկային էակներ, և ոչ իսկ որպես քաղաքացիներ, այլ որպես զինվորներ, որոնք ևս ոչ թե հայրենիքի քաղաքացիներ են. այլ նրա պաշտպանները...: Քանի որ պատերազմի նպատակը թշնամի պետությունն ոչնչացումն է. ուրեմն մյուս կողմն իրավունք ունի սպանել այդ պետության պաշտպաններին այնքան ժամանակ, քանի դեռ նրանք զենք են կրում: Սակայն հենց որ նրանք վայր դնեն այդ զենքն ու հանձնվեն, դադարում են թշնամի կամ թշնամու ձեռքին գործիք լինելուց և դառնում են նորից պարզապես մարդիկ, որոնց այլևս չի թույլատրվում կյանքից զրկել»: Այսպիսով, Ռուսոյին ենք պարտական

պատերազմի ժամանակակից իրավունքի հիմնարար սկզբունքի հստակ և սպառիչ ձևակերպման համար: Գրչի մի հարվածով նա չնչացրեց Հոբսի տեսակետներն այն մասին, որ պատերազմը բնական է մարդկության համար, որ այն բացատրվում է պետության գերագույն շահերով, որի համար անհատները լոկ առարկա են: Պատերազմների և դրա առաջացրած մարդկային կորուստների ու տառապանքների վրդովեցուցիչ պայմանների դեմ իրենց ձայնը բարձրացրին ականավոր բժիշկներ Պերսին և Լարրեն Ֆրանսիայում, Ֆաուստն ու Վասերֆյուրը Գերմանիայում: Եթե մարդկությունը հետևեր նրանց խորհուրդներին, կարելի կլիներ փրկել հազարավոր կյանքեր /բժշկական օգնություն ցույց տալ բոլոր վիրավորներին, անկախ թե ում կողմից էին նրանք կռվում/, սակայն զինվորական բարձրաստիճան պաշտոնյաները երբեք չանսացին նրանց հորդորներին: Ավելին, իրենց ժամանակաշրջանից կես դար առաջ անցած այս բժիշկներն առաջարկում էին միջազգային մի կոնվենցիա ստորագրել, որով ապահովվեր վիրավորների անձեռնմխելիությունը: Սակայն նրանց բոլոր ջանքերը զուր էին: Գուստավ Մուանիեն ժնևի Նպաստամատույց ընկերության նախագահը, իրատես և գործի մարդ, հրավիրեց իր ընկերության նիստ՝ ուսումնասիրելու Դյունանի առաջարկները և դրանց գործնական ընթացք տալու ամար: Այս նպատակով նախ հանձնաժողով ստեղծվեց, այնուհետև հինգ հոգուց բաղկացած կոմիտե՝ Դյունան Սուանիե, գեներալ Դյուֆուր, բժիշկներ Ապիա և Մոնուար. որն առաջին ժողովը գումարեց 1863 թ. փետրվարի 17-ին: Առաջին օրվանից կոմիտեն հանդես եկավ որպես մշտապես գործող հաստատություն՝ հետագայում դառնալով Կարմիր խաչի հիմնադիրը եւ նպաստելով ժնևյան կոնվենցիաների ընդունմանը:
1880 թվականին այն անվանվեց Կարմիր խաչի միջազգային կոմիտե:Նույն տարում այս փոքրակազմ կոմիտեն, որ բաղկացած էր որևէ իշխանություն չունեցող մասնավոր անձանցից, որոնց սակայն առաջ էր մղում մարդասիրության նկատմամբ խոր հավատը, աշխարհի պետություններին առաջարկեց իր ներկայացուցիչներն ուղարկել ժնև: ճակատագիրը բարեհաճ է խիզախների հանդեպ, 1863 թ. հոկտեմբերին կայացած նախնական ժողովին, որը դրեց հետագայում Կարմիր խաչ անունը ստացած կազմակերպության հիմքերը, և որը դեռևս իր միակ նպատակն էր համարում օգնել վիրավոր զինվորներին. 16 երկրներ ուղարկեցին իրենց ներկայացուցիչներին: Դիվանագիտական համաժողովը, 1864 թ. օգոստոսի 22-ին ընդունեց «Գործող բանակներում վիրավոր զինվորականների վիճակի բարելավման մասին» ժնևի կոնվենցիան: Սրանով նշանավորվեց մարդասիրական իրավունքի ծնունդը: Մեկ դարից պակաս ժամանակի ընթացքում ժնևյան կոնվենցիայի սկզբունքներն աստիճանաբար տարածվեցին պատերազմի զոհերի այլ

կատեգորիաների վրա ի վերջո հանգեցնելով նաեւ Հաագայի փաստաթղթերի կնքմանը: Այդ պատճառով էլ ժնևյան կոնվենցիան անվանում են «Մայր կոնվենցիա»: Կոնվենցիան, սակայն, մի քանի անգամ վերանայման է ենթարկվել: Կոնվենցիան առաջին անգամ վերանայվեց 1906թ. հոդվածների թիվը հասցնելով 33-ի առանց փոփոխության ենթարկելու էությանը: Երկրորդ անդամ կոնվենցիան վերանայվեց 1929 թ.: Այս շրջանում էր ծնունդ առել սանիտարական ավիացիան, որն էլ հաշվի առնվեց փոփոխություններում. ինչպես նա վերացվեց «փոխադարձության հիման վրա» դրույթը: 1929 թ. կոնվենցիան, ընդհանուր առմամբ, պատվով անցավ Երկրորդ համաշխարհային պատերազմի փորձությունը: Այն բազմաթիվ գերիների համար իսկական պաշտպանություն ապահովեց, որ շահեկանորեն տարբերվում էր 1914-18 թթ. պայմաններից: Դրանում համոզվելու համար բավական է նշել, որ այնտեղ, ուր այն կիրառվում էր, ռազմագերիների մահացության տոկոսը չէր գերազանցում բնականին, մինչդեռ ռազմագերիների այն ճամբարներում, որտեղ կոնվենցիայի կանոնները չէին պահպանվում, կամ քաղաքացիական բնակչության համակենտրոնացման ճամբարներում, մահացությունը կազմում էր 30-90%: Սա ցույց է տալիս, որ նույնիսկ ոչ լիարժեք կիրառվելու դեպքում մարդասիրական կոնվենցիան իշխանության չարաշահումների դեմ անհրաժեշտ պատնեշ է հանդիսանում: Ընդունվեց նաև բուժանձնակազմը գերության մեջ պահելու անթույլարելիության և նրա սեփական ճամբար վերադարձվելու մասին սկզբունքը, սակայն այսպիսի վերապահումով, «եթե հատուկ համաձայնագրով այլ բան չի նախատեսված», որից, ի միջի այլոց, շատ օգտվեցին 2-րդ համաշխարհային պատերազմի ժամանակ՝ բուժաշխատողներին պահելով ճամբարներում: Սակայն 1974-77 թթ Դիվանագիտական համաժողովը նոր այլ զգալի բարեփոխումներ արձանագրեց: 1974 թ. Դիվանագիտական համաժողովը նախապատրաստելիս ԿԽՄԿ-ն նախագծերում չէր ընդգրկել որևէ զենքի արգելման կամ սահմանափակման վերաբերյալ նյութեր, քանի որ խնդիրը նրբին էր և ուներ քաղաքական ու ռազմական ենթատեքստեր: Սակայն մի քանի կառավարություններ, Շվեդիայի գլխավորությամբ, պահանջեցին, որ համաժողովն անդրադառնա նաև այդ հարցին: Իր կողմից՝ ԿԽՄԿ-ն հրավիրեց կառավարական փորձագետների երկու համաժողով՝ 1974 թ. Լյուցերնում և 1976 թ. Լուգանոյում : Դիվանագիտական համաժողովն այս հարցով որևէ որոշում չկայացրեց, սակայն առաջարկեց հատուկ այս խնդրին նվիրված ժողով գումարել: Այն տեղի ունեցավ 1979-1980 թթ., ՄԱԿ-ի հովանու ներքո և ավարտվեց 1980 թ. հոկտեմբերի 10-ի՝ «Չափազանց մեծ վնասվածքներ պատճառող կամ ոչ ընտրողական գործողություն ունեցող սովորական զենքի որոշ տեսակների կիրառումն արգելելու կամ սահմանափակելու

մասին» կոնվենցիայի ընդունմամբ; ճիշտ է, նոր կոնվենցիայի կիրառման ոլորտը համեմատաբար նեղ է, այնուամենայնիվ, սա մեծ և գրեթե անակնկալ նվաճում էր: Կոնվենցիան պարունակում է ընթացակարգի կանոններ և իրավունքի ընդհանուր սկզբունքների հակիրճ նկարագրություն: Հիմնական դրույթները զետեղված են երեք հավելվածներում, որոնցից առնվազն երկուսը պետք է վավերացվեն պետությունների կողմից, եթե նրանք ուզում են կոնվենցիայի մասնակից լինել:

1. արձանագրությունն արգելում է այն արկերի կիրառումը, որոնց բեկորները հնարավոր չէ ռենտգենի օգնությամբ հայտնաբերել մարդու օրգանիզմում: Դա հիմնականում վերաբերում է բեկորային պլաստիկ ռումբերին:

2. արձանագրությունը դատապարտում է ականները, ականծուղակները խաղաղ բնակչության դեմ կիրառվող կամ ոչ ընտրողական ձեւով կիրառվող այլ զենքեր. որոնք կարող ես ողատահական զոհեր առաջացնել խաղաղ բնակչության շրջանում եւ չափազանց մեծ կորուստներ պատճառել ենթադրվող կոնկրետ և ուղղակի առավելության համեմատ: Դա հիմնականում վերաբերում է ռազմական գոտիներից դուրս տեղադրված ականներին: Բոլոր հանգամանքներում արգելվում էին նաև ավելորդ վնասվածքներ ու տառապանքներ պատճառող ական-ծուղակները. մասնավորապես նրանք, որ տեղադրված են արտաքուստ անվնաս առարկաների, օրինակ' մանկական խաղալիքների մեջ, ստոր պրակտիկա, որ, ցավոք, կիրառվում է: Արձանագրությունը պահանջում է ականների տեղադրման պլանների կազմում և դրանց հրապարակում ռազմական գործողությունների ավարտից հետո:

3. արձանագրությունը մեծ առաջընթաց քայլ նշանավորեց՝ սահմանափակելով հրկիզող զենքերի օգտագործումը: Բոլոր հանգամանքներում արգելվում է այս զենքի օգտագործումը խաղաղ բնակչության դեմ, եւ այդ արգելքը տարածվում է նույնիսկ այն ռազմական օբյեկտների վրա, որոնք տեղակայված են խաղաղ բնակչության կուտակ-ման վայրերում, ինչպես նաև անտառների և այլ տիպի բուսական ծածկույթների վրա, բացի այն դեպքերից, երբ դրանք օգտագործվում են զորքերի կամ ռազմական օբյեկտների քողարկման համար: Վերջապես. համաժողովը բանաձև ընդունեց հրաձգային զենքերի մասին՝ կառավարություններին կոչ անելով շարունակել այս զենքերի ազդեցության վերաբերյալ ուսումնասիրությունները և նախազգուշական միջոցներ ձեռնարկել դրանց հետագա կատարելագործման հարցում: Վերոհիշյալ սկզբունքից բխում է ոչ միայն չափից ավելի դաժան, այլեւ ոչ ընտրողական զինատեսակների և համընդհանուր պատերազմի մեթոդների արգելումը:

Իսկ այժմ անդրադառնանք կիրառման սկզբունքներին.

I/ *Արգելվում են ոչ ընտրողական բնույթի հարձակումները*:Այս արգելքը տեղ է գտել 1977 թ. արձանագրության 51 հոդվածի 4 կետում:

2/ *Արգելվում են այն զենքերը եւ մեթոդները, որոնք քաղաքացիական անձանց կամ քաղաքացիական օբյեկտներին կարող են պատճառել կոնկրետ եւ ուղղակի ակնկալվող ռազմական առավելության համեմատ չափից ավելի մեծ վնասներ:*

Այս սկզբունքը, որում ընդգծվում է համամասնականության գաղափարը, տեղ է գտել 1977 թ. արձանագրության նախազգուշական միջոցներին նվիրված գլխում /հոդվ. 57. 3/ *Ռազմական գործողությունների ընթացքում պետք է հոգ տարվի շրջակա միջավայրի պահպանությանը*:

4/ *Արգելվում է քաղաքացիական բնակչության շրջանում սովն օգտագործել որպես պատերազմելու մեթոդ*:

Այս նոր եւ կարեւոր գաղափարը, որ մենք տեղագրել ենք կիրառման սկզբունքների մեջ. արտացոլված է 54 հոդվածի 1 հակիրճ կետում: Անտարակույս, սա մարդասիրական սկզբունքների նվաճումներից մեկն է:

5/ *Արգելվում են դավաճանության կամ ուխտադրժության վրա հիմնված ռազմական գործողությունները:* Դեռեւս ասպետության դարաշրջանում պատերազմի իրավունքը կռվող կողմերին պարտադրում էր ազնվություն: Դա չի բացառում ռազմական խորա-
մանկություններին դիմելը, սակայն արգելում է ուխտադրժությունը:

ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ուզենք թե չուզենք, պետք է խոստովանել, որ պատերազմը մարդու ամենահզոր բնազդներից մեկի դրսևորումն է, և կարելի է ասել, որ այն երկար ժամանակ ժողովուրդների միջեւ հարաբերությունների ամենակարևոր ձևն է եղել: Ըստ վիճակագրական տվյալների, մարդկության 5000-ամյա պատմության ընթացքում 14000 պատերազմ է տեղի ունեցել, որոնց հետևանքով զոհվել է 5 միլիարդ մարդ: Վերջին 3400 տարիների ընթացքում աշխարհն ընդհանուր առմամբ ընդամենը 250 տարի է ապրել խաղաղության մեջ: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զոհվեց 10 միլիոն մարդ, համամասնորեն՝ 20 զոհված զինվորին ընկնում էր մեկ քաղաքացիական անձ՝ չհաշված համաճարակների հետեւանքով մահացած 21 միլիոնը: Երկրորդ աշխարհամարտի ժամանակ զոհվածների թիվը 40 միլիոն էր՝ մոտավորապես հավասար չափով զինվորականներ եւ քաղաքացիական անձինք: 1945-1969 թթ. աշխարհում տեղի է ունեցել 73 զինված ընդհարում: Այսօր, ըստ փորձագետների, «սովորական» պատերազմի հետևանքով սպանվածների հա-
րաբերակցությունը կլիներ 10 քաղաքացիական անձ մեկ զինվորականի դիմաց եւ

100 քաղաքացիական անձ՝ մեկ զինվորականի դիմաց միջուկային պատերազմի դեպքում: 1900-1941 թթ. տեղի ունեցած 24 զինված ընդհարումներից տասնինը միջազգային բնույթ ունեին, և միայն հինգն էին ներքին ընդհարումներ: Սակայն այդ ժամանակից ի վեր իրավիճակը փոխվել է. 1945-1969 թթ. 97 ընդհարումներից միայն 15-ն էին միջազգային բնույթի. 26-ը ներքին էին. իսկ 56-ը' խառը բնույթի կամ ազատագրական պատերազմ էին: Այս կազմակերպված սպանդի դեմ-հանդիման արդյոք Կարմիր խաչը պետք է հրաժարվի իր կզբունքներից: Մի՞թե նա պետք է համակերպվի՝ տեսնելով, թե ինչպես է երիտասարդության ծաղիկը զոհվում արյունով հեղված մարտադաշտերում: Կարմիր խաչն ամենից ավելի մերժում է պատերազմը և նրա առաջացրած տառապանքները: Նրա իդեալները տարածվում են բոլոր մարդկանց, այդ թվում նաև մարտիկների վրա: Սակայն անկարող լինելով վերջ դնել չարիքին՝ նա ձգտում է գոնե պահպանել մարդասիրության հիմնական սկզբունք-ները հանուն նրանց, ովքեր ի վիճակի չեն մարտնչել կամ այլեւս մարտնչելու ուժ չունեն: Անխուսափելի աղետի պայմաններում Կարմիր խաչը փորձում է այն, ինչ դեռ հնարավոր է փրկել և կանխել մահաբեր զենքերի կիրառումը նույնիսկ զինվորականների հանդեպ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Որպես ամփոփում փորձենք պարզել մի քանի կարևոր հարցեր. *Առաջին հարցը* հետևյալն է՝ հնարավոր արդյոք սահմանափակել պատերազմի հետևանքով առաջացող աղետները: Դեռևս Կանտն այդ հասին ասում էր. «Պատերազմի ժամանակ միջազգային իրավունքն այն ամենանրբին խնդիրն է. որ երբևէ կարելի է պատկերացնել: Իրոք ինչպես կարելի է օրենքներ սահմանել մի այնպիսի իրավիճակի համար, որն ի բնե օրենք չի ընդունում»: Մի շարք այլ հեղինակներ ավելի հեռուն էին, գնում պնդելով, որ պատերազմն ու իրավունքն իրենց էությամբ անհամատեղելի են: *Երկրորդ հարցը*՝ արդյոք ցանկալի է մեղմել պատերազմի դաժանությունները: Որոշ հեղինակներ պնդում են, թե ամենադաժան պատերազմներն իրականում ամենամարդկայինն են, քանի որ արագ են վերջանում: Ուստի պետք չէ ջանալ պատերազմներին «մարդկային» բնույթ տալ: Այդպիսի ամենահայտնի մտածողներից մեկը Կլաուզվիցն էր. որն անցյալ դարի սկզբին գրում էր. «Այնպիսի վտանգավոր գործում, ինչպիսին պատերազմն է, ամենակործանարարն այն սխալներն են, որոնք բխում են բարեսրտությունից»: *Երրորդ հարցն* այսպիսին է՝ փորձելով նվազեցնել պատերազմի պատճառած տառապանքները՝ արդյոք մենք չե՞նք վնասում դրա իսպառ վերացմանն ուղղված ջանքերին: Այսօրինակ քննադատություն ուղղվել է նաեւ Կարմիր խաչի

հիմնախդիրներին: Այսօր էլ ամեն անգամ, երբ մարդասիրական կոնվենցիաներ են մշակվում. կարելի է լսել նույն բանը՝ ավելի լավ կլիներ մտածեիք, թե ինչպես անհնարին դարձնել պատերազմը: Ոմանք կարծում էին, թե մարդասիրական իրավունքը պատերազմին պաշտոնական «ճանաչում» է հաղորդում և այն համարում անխուսափելի, որ դրա պատճառած չարիքները մեղմելով մենք այն նվազ ատելի ենք դարձնում: *Չորրորդ հարցը*, միչև վերջին ժամանակներս պետություններն իրավունք ունեին պատերազմ սկսել իրենց քաղաքականության պահանջներից ելնելով, և նման որոշում կայացնելը նրանց ինքնիշխան իրավունքն էր: Այս իրավիճակը փոխվեց 1920 թ. Ազգերի լիգայի ստեղծման դաշնագրի և 1928 թ. Բրիան-Քելլոգի դաշնագրի ընդունման կապակցությամբ: Նույն ոգով ընթանալով՝ ՄԱԿ -ի կանոնադրությունն արգելք դրեց պատերազմի, ինչպես նաև բռնության ցանկացած կիրառման վրա: Սակայն ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն իրավունք ունի հարկադրանքի միջոցներ կիրառել հարձակվող պետության նկատմամբ: Այսօր միայն երեք տիպի ընդհարմանն վրա արգելք չի տարածվում. ՄԱԿ-ի՝ խաղաղության վերականգնմանն ուղղված գործողություններ, օրինական ինքնապաշտպանության վիճակում վարվող գործողություններ և ներքին ընդհարումներ, որոնք ՄԱԿ-ի իրավասությունից դուրս են մնում: Իհարկե, ողջունելի է պատերազմի՝օրենքից դուրս հայտարարելը, սակայն չի կարելի մոռանալ, թե ինչ գնով է ասյն ձեռք բերվել: Եվ քանի որ պատերազմն օրենքից դուրս է, ոչ մի պետություն չի ցանկանում իր վրա վերցնել պատերազմ հայտարարելու պատասխանատվությունը: Պատերազմի արգելման հետևանքներից մեկն էլ արդարացի պատերազմի հին առասպելի անակնկալ վերահայտնությունն է, առասպել, որ այդքան հաջողությամբ փորձում է այսօր էլ օգտագործել ադրբեջանը իր թուրք «դատապաշտպանի» հետ: *Հիգերորդ հարց*՝ մարդասիրական իրավունքը պատերազմի իրավունքի մի մասն է: Քանի որ պատե-րազմը վտանգի տակ է դնում պետության գոյությունը, ապա վերջինս իր բոլոր ուժերը լարում է այդ պայքարի ընթացքում: Այս պայմաններում մարդասիրական իրավունքի դրույթներն ավելի մեծ չափով կարող են խախտվել, քան այլ նորմերը: Մռայլ երանգներով չավաչտելու համար փորձենք ամփոփել այսպես, որ թեև իրավունքի այս երկու ճյուղերն իրար մոտ են, սակայն նաև տարբեր են և այդպիսին էլ պետք է մնան, քանի որ հրաշալի կերպով լրացնում են միմյանց: Եթե որոշենք դրանք միավորել մեկ ընդհանուր վերնագրի ներքո, թերևս ընտրենք «Մարդկային իրավունք» տերմինը այն սահմանելով հետեյալ կերպ. *«Մարդկային իրավունքը բաղկացած է միջազգային իրավական բոլոր այն դրույթներից, որոնք ապահովում են մարդ անհատի նկատմամբ հարգանքը և ինքնադրսևորման նրա հնարավորությունը »;*

ԿԻՐԱՌՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Տարիների փորձը ցույց է տվել, որ այս նյութի ուսումնասիրման ժամանակ սովորողների կողմից բարձրացվող հարցերի շրջանակը հիմնականում վերաբերվում է Հայաստանին ու Արցախին միջազգային այդ կարևոր կառույցների որոշումներին, հակառակորդի /ադրբեջան և թուրքիա/ ոտնձգությունների միջազգային դատապարտմանն ու արդարության վերականգնմանը՝ ինչպես պատմական այնպես էլ մերօրյա, քանի որ մարդկության հանդեպ կատարված նմանօրինակ հանցագործությունները վաղեմության ժամկետ չունեն: Հաշվի առնելով այն փաստը, որ նյութը սերտորեն կապված է «Հայոց պատմություն», «Համաշխար-հային պատմություն» և «Հասարակագիտություն» առարկաների հետ, կարևոր եմ համարում նյութն ուսումնասիրել ինտերակտիվ մեթոդներով, ինտեգրված դասերի տեսքով ընդգրկելով նաև վերոհիշյալ առարկաների ուսուցիչներին, որոնք նույնպես նյութի մեծ պաշար կունենան հաղորդելու սովորողներին և կխթանեն այն լիովին յուրացմանը: Այս նյութի դասավանդման ժամանակ կիրառում ենք խոսքային մեթոդը՝ դասը վարելով զրույցի ձևով. մտագրոհի միջոցով որոշակի ժամանակում անհատական կամ զույգերով կազմվում է սովորողների կողմից իմացած տեղեկատվությունը նոր հաղորդվելիք թեմայի վերաբերյալ և բոլոր մտքերը, գաղափարները գրի են առնվում գրատախտակին: Յուրաքանչյուր միտք, թեկուզ անվստահ խրախուսվում է ու բացառվում է առաջադրված լուծումների մասին որևէ քննադատություն կամ գնահատական: Յուրաքանչյուր մասնակից ազատ և անկաշկանդ արտահայտում է իր իմացածը, չի անհանգստանում սխալվելուց, անհավանական, անհեթեթ և հակասական գաղափարները արտահայ-տելու մտավախություն չի ունենում: Այդպիսի անկաշկանդ մթնոլորտի ստեղծումը նպաստում է ստեղծագործական մտածողության զարգացմանը: Մտքերը, գաղափարները գրատախտակին գրի առնելուց հետո մատուցվում է նոր նյութը, ապա քննարկվում են առաջադրված գաղափարները, անհրաժեշտության դեպքում լրացվում, եղած անհամաձայնությունները քննարկվում, շտկվում են: Այս ամբողջ ընթացքում նրանք հայտնում են իրենց կարծիքները, գաղափարները, հարցեր ուղղում և միմյանց, և դասավանդողին: Հիմնական նպատակը աշակերտների ուշադրությունը տվյալ նյութի վրա կենտրոնացնելն է, նոր գաղափարներ «հայտնաբերելն է»: Ճիշտ են հետևյալ ասույթները. «Չկա ավելի վտանգավոր բան, քան այն միտքը, որը միակն է», և «Լավ մտահաղացումներ ունենալու լավագույն ձևը շատ մտահաղացումներ ունենալն է»:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՆԶՊ առարկայական չափորոշիչ
ՆԶՊ դասագիրք 8-11
http://library.cmsa.am › media › docs ›
https://www.redcross.am › wh...
https://hy.wikipedia.org › wiki